



**Տեղեկությունների համար դիմել՝**  
Հայկ Ասրիյանց  
+374 55 429500  
asriyants@gmail.com

Մարիամ Մովսիսյան  
+374 55 992241  
mariam@deemcommunications.com

**StartUp Cup նախագծի հարցերով՝**  
Քրիստեն Բերգման  
+1 918-409-2246  
kristen@startupcup.com

**Հայաստանում մեկնարկել է «StartUp Cup» բիզնես-մոդելի մրցույթը, որի նպատակն է նոր աշխատատեղեր ստեղծել**

**Օգոստոսի 20, 2012թ. Երևան, Հայաստան.** Այսօր հայտարարվել է Հայաստանում առաջին StartUp Cup (Ստարտափների առաջնություն) բիզնես-մոդելի մրցույթային ծրագրի մեկնարկը: Մրցույթային նախագծերը կարելի է ուղղարկել [armenia.startupcup.com](http://armenia.startupcup.com) կայքից մինչև սեպտեմբերի 7-ը, ժամը 23:59-ը:

Ստարտափների առաջնությունը նոր բիզնես-մոդելների մշակման միջազգային մրցույթ է, որը հիմնվում է նախաձեռնողական եւ տեղի ներուժի օգտագործման սկզբունքների վրա՝ թույլ տալով մրցույթին ներկայացնել ցանկացած բիզնես-գաղափար: Մրցույթի ընթացքում մասնակից ձեռներեցներին կուսուցանեն, խորհրդատվություն կտրամադրեն եւ կուղղորդեն տեղի շուկայում թրծված փորձառու մասնագետները:

«Այս նախաձեռնությունը մեծ հնարավորություն է Հայաստանի ձեռներեցների համայնքի համար», - ասում է ծրագրի կազմակերպիչ Հայկ Ասրիյանցը: «Ամենակարեւորն այն է, որ սա ձեռներեցական միջավայր ձեւավորելու փորձված եւ գործուն մոդել է: Ավելին, նախագծի առավելությունը աշխարհի տարբեր երկրներում անցկացվող Ստարտափների առաջնությունների կազմակերպիչների հետ կապ հաստատելու հնարավորությունն է»:

Հայաստանի ստարտափների առաջնության համակազմակերպիչն է Նորաստեղծ տեխնոլոգիական ձեռնարկությունների ասոցիացիան, նախաձեռնությանը աջակցում են նաեւ Ձեռնարկատիրությունների ինկուբատոր հիմնադրամը, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը եւ Ձեռնարկատիրության եւ կառավարման զարգացման կենտրոնը:

«Մենք շատ ոգեւորված ենք, որ Հայաստանը միացել է StartUp Cup նախագծին», - ասում է StartUp Cup-ի գլխավոր գործադիր տնօրեն Շոն Գրիֆինը: «Համայնքները կանգնած են ձեռներեցական մթնոլորտի բազմազանությունը սատարելու մարտահրավերի առջեւ: StartUp Cup-ը նպատակ չունի լինել զուտ ստարտափների ստեղծման ջատագով: Մեր նպատակն է առաջ ընկնել գաղափարներ գեներացնող ծրագրերից՝ կենտրոնանալով այն գործընթացների վրա, որոնք անհրաժեշտ են այնպիսի բիզնես նախագծելու եւ կառուցելու համար, որն ընդունակ է գոյատևել երկար ժամանակ»:

Ձեռներեցները, ովքեր մասնակցում են Հայաստանի ստարտափների առաջնություն բիզնես-մոդելի մրցույթին կկազմեն կենսունակ բիզնես-մոդելներ, կձեւավորեն հաճախորդների շրջանակ եւ կխթանեն իրենց ստարտափները դեպի շուկա՝ ժյուրիի եւ փորձառու մասնագետների հետ քառամսյա աշխատանքից հետո: Հաղթողները կհայտարարվեն նոյեմբերին՝ Գլոբալ ձեռնարկատիրական շաբաթվա ընթացքում կայանալիք մրցանակաբաշխությանը:

## **StartUp Cup-ի մասին**

StartUp Cup-ը բիզնես-մոդելների միջազգային մրցույթ է, որը մշակվել է սաղմնային փուլում գտնվող ձեռներեցական ծրագրերին համայնքային մակարդակով երկարաժամկետ աջակցություն տրամադրելու նպատակով: Բիզնես կառուցելու եւ աշխատատեղեր ստեղծելու այս գործուն մոդելը կարող է կրկնօրինակվել ցանկացած համայնքում: Մանրամասների համար այցելեք [startupcup.com](http://startupcup.com) կայք:

###